www.mediaforedu.am
Տեղեկատվական-վերլուծական կայք
Երևան, Հայաստան

ՀՀ ԿԳՄՍ նախարար
Ժաննա Անդրեասյանին

Հարցում

Հարգելի տիկին Անդրեասյան,

ՀՀ՝ PISA հետազոտությանը մասնակցելը եղել է ՀՀ կառավարության որոշումը, և, ինչպես Դուք հրապարակավ հայտնել էիք, նպատակն է ունենալ միջազգային համադրելի տվյալներ, դրանց հիման վրա ճիշտ ախտորոշել կրթական համակարգի խնդիրները և հստակեցնել հետագա անելիքները: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին.

1. PISA 2025-ի արդյունքները հաշվի առնելով՝ նախատեսվո՞ւմ է մշակել Հայաստանի կրթության որակի բարելավման վերանայված ճանապարհային քարտեզ կամ նմանատիպ որևէ այլ փաստաթուղթ՝ ելակետ համարելով հենց այդ ստուգատեսի տվյալները: Եթե նման փաստաթուղթ արդեն մշակվում է, խնդրում եմ ներկայացնել տվյալներ՝ բովանդակային հիմնական ուղղությունները, նախատեսված միջոցառումները, իրականացման ժամկետները, նախանշվող ֆինանսական միջոցները և պատասխանատու կառույցները:

2. Նախարարության առաջիկա ծրագրերում նախատեսվո՞ւմ է Հայաստանի դպրոցներում անցկացնել ներքին գնահատումներ՝ PISA-ի մեթոդաբանությանը համապատասխան առաջադրանքների կիրառմամբ՝ պարզելու, թե որքանով են սովորողները կարողանում գիտելիքներն ու հմտությունները կիրառել իրական կյանքի իրավիճակներում, և արդյո՞ք նոր հանրակրթական չափորոշչի ներդրումն ուղեկցվում է այդ կարողությունների զարգացմամբ:

3. Եթե հարցման 2–րդ կետում նշված գնահատումներ նախատեսվում են, խնդրում եմ հստակեցնել՝

3.1. ե՞րբ են նախատեսվում դրանք իրականացնել,

3.2. ո՞ր տարիքային խմբերն են ընդգրկվելու,

3.3. ի՞նչ պարբերականությամբ են անցկացվելու:

4. Եթե նման գնահատումներ առայժմ նախատեսված չեն, խնդրում եմ պարզաբանել՝ ինչ այլ մեխանիզմներով է նախարարությունը հետևելու նոր չափորոշչի ներդրման ազդեցությանը սովորողների՝ PISA-ում գնահատվող կարողությունների զարգացման վրա:

Խնդրում եմ այս գրությանը պատասխանել մանրամասն և հստակ, ներկայացնել ամբողջական տեղեկությունները՝ ըստ հարցերի համարակալման, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հնգօրյա ժամկետում:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝ Անուշ Մարտիրոսյան

mediaforedu.am կայքի խմբագիր

13.10.2026 թ.

Էլ. փոստ՝ mediaforeducation.ngo@gmail.com

հեռ.՝ +374 41 12 22 72